

VIA DOLOROSA

Երուսաղեմում կայ մի փողոց, որով բա աւանդուրեան անցել է գետի
Դոլորոսա Խաչակիր Յիսուսը: Այդ փողոցը այժմ կոչում է *Via
Dolorosa*, այսինքն սպի եւ շարժարանի ուղի:

ՄԻ ԳՐԲԻՑ

Նա որք էր:

Նա ութը տարեկան էր, երբ փողոցը
ընդունեց նրան իւր գիրկը եւ դարձաւ նրա
մայրը:

Եւ այդ խորթ մայրը սնխնայ ցեխո-
տեց, կեղեքեց այն սրբութիւնը, այն մա-
քուր զգացմունքները, որ բնութիւնը դրել
էր մանկական այդ փոքրիկ սրտում:

Կեղտոտ ցնցոտիների մէջ, ոտաբոքիկ,
անկարգ թափուած մազերավ, նա այսու
ամենայնիւ գեղեցիկ էր եւ նրա նուրբ
գծագրած երեսը, նրա կարծես կճէագործի
հմուտ ձեռքով տաշած կզակը եւ քիթը,
նրա խոշոր սեւորակ աչքերը, շրջապատ-
ուած աղեղնաձեւ յօնքերով, նրա նուրբ
ձեռքերի տելի նուրբ երկար մասները,
գրաւիչ տակաւորութիւն էին թողնում այդ
փողոցով անցնողների վրայ, երբ փոքրիկ
որբը կանգնած անկիւնում՝ անդադար
կրկնում էր ուրախ, անհոգ ձայնով:

— Ողորմութիւն արէք... ի սէր Աս-
տուծո՛յ...

Մւկ էր մտքերով նա այդ բոսէներին,
ի՞նչ երազներ, ի՞նչ դիմութիւն տեսիներ պատ-
կերանում էին նրա լայն բացած սեւորակ
աչքերի առաջ, — ո՞վ գիտէ:

Մեքենայաբար կրկնելով իր սովորա-
կան «ողորմութիւն արէք»ը, նա սաս երե-
սոյթին իր ամբողջ էութեամբ, իր մաքե-
րով անձնատուր էր եղած երազական ապ-
րումներին:

Ամենքը ճանաչում էին փոքրիկ մու-

րացիկ Սաթօյին, ամենքը տալիս էին նրան
սեւ փողեր:

Ամբողջ օրը Սաթօն կանգնած էր լի-
նում քաղաքի այդ գլխաւոր փողոցում.
կանգնած ձմբան բուք ու բորանին, աշնան
անվերջ անձրեւներին, ու ցեխին, ամառ-
ուայ կիզիչ շոգերին ու բոցերին:

Եւ երբ մութը ընկնում էր գետին, նա
թողնում էր փողոցը եւ գնում էր քաղաքի
յետ ընկած թաղը:

Այստեղ, փոքրիկ խրճիթում ապրում
էր մի պառաւ կին, որ տալիս էր Սաթօյին
տապատարան եւ ապրուստ այն բոլոր սեւ
փողերի փոխարէն, որ հաւաքում էր մու-
րացիկ Սաթօն:

Պառաւը մի հրէշ էր:

Միշտ արբած, նա անդադար սարքում
էր կոկներ, բարձրացնում էր աղմուկ եւ
ծեծում էր Սաթօյին:

— Այդ սէռ... ես քեզ ցոյց կը տամ, սա-
տանի՛ ճուտ... կրկին գողացել ես փողերս,
աղաղակում էր կասազած պառաւը եւ ան-
ինայ մարակում էր Սաթօյին:

— Ես... տէտի... ես չեմ առել...

— Զե՞ս առել... հա՞... ես լաւ գիտեմ
քո օյլիները... անուշեղէն ես կերել հա՞...
ա՞յ քեզ, ա՞յ քեզ:

Եւ ծանր հարուածները իջնում էին
Սաթօյի թոյլ, անզօր մարմնին, գլխին:

Պառաւը բանում էր նրա մազերից,
քարշ էր տալիս եւ հայհոյելով անվերջ
ծեծում էր, կարծես գանելով մի զուար-

ՃՈՒԹԻՆ փոքրիկի աղիողորմ ճշերի մէջ:
Պառաւը գումար չունէր:

Եւ Սաթօյի ճիչը համառում էր գրացիւների ականջներին, որոնք թափուում էին բակը, մոնում էին պառաւի որջը, խլում էին կիսամեռ Սաթօյին կատաղի գաղանի ճեռքից:

Ցողնած այդ «աշխատանք»ից, արիւնալից աչքերով, ծանր հեւալսվ, ուժասպառ պառ պառաւը երերալով մօտենում էր պահարանին, վերցնում էր մի շիշ օղի եւ սկսում էր խմել:

Եւ իր ճիթի սուսունքի մէջ գեռ երկար լուսում էր նրա սրբած ծիծաղը, վայրի ըացագանչութիւնները եւ հայշոյանքն ու անէծքը:

Խոկ խրճիթի նեղ, մութ, խոնաւ եւ ցուրտ սրաշում կեզտոտ ցնցոտիների վրայ էր լինում Սաթօն: Նրա մարմինը սաստիկ ցաւում էր: Կարծես սուր ասեղներ ցցուած լինէին այդ կապուտած կաշու մէջ:

Եւ գիշերուայ մթութեան մէջ գեռ լուսում էին Սաթօյի սրտաճմլիկ, խեղդուած հեծկլտանքները:

Աղակների մեծ, փայլուն ապակիների վրայ, վաղոցով անցուդարձ անողները նկատեցին մի շենք կառք, ուր նստած էր մի գեղեցկուհի:

Թանկագին, վերջի տարագի շորերը հագին, թաթախուած աղամանդների մէջ, անհոգ ժպիտը շրթներին, գեղեցկուհին ուրախ ուրախ նայում էր շուրջը եւ իր սրտի խորքում զգում էր խոր գեղեցկութիւնը եւ նրա արժէքը:

— Տեսէք... տեսէք... այդ կինը, գտ մուրացիկ Սաթօն է:

— Ի՞նչ էք ասում...

— Այո՛, այո՛... միթէ չէ՞ք լսել... նա այժմ միլիոնատէր չաճեանի սիրուհին է:

— Օ՛, լա՛, լա՛:

— Այո՛..., ծերուկը խելագարի պէս սիրում է Սաթօյին եւ ոչինչ չէ ենայում նրա համար:

— Փողոցից պալատ, գտ մի մեծքայլ է:

— Կեանքը գիտէ այդպիսի թոփշըներ:

Եւ խօսողները ծիծաղելով շարունակեցին իրենց ճանապարհը:

Սաթօն արգէն 15 տարեկան էր:

Զնայելով իւր այդ թշուառ կեանքին եւ սեւ օրերին, որ անցնում էին քաղցի, մուրացկանութեան եւ ծեծերի մէջ, նա գարձաւ գեղեցիկ, չքնաղ մի աղջիկ:

Երկարահասակ, բարակ իրանով, նուրբ կազմուած քով, կրակոտ, վասվուն աչքերով, նա նմանում էր զնչուհու, գեղեցիկ, չքնաղ գնչուհու:

Եւ Սաթօն այլ եւս չէր կանգնած գլխաւոր փաղոցի անկիւնում, իւր մշտական տեղը:

Սաթօն անչետացել էր եւ անկիւնում կանգնած էր մի հիւանդու երերով, չոր ու ցամաք մի կուզ տղայ:

Մի ամարային օր, երբ արեւը իւր ու կեփայլ ցոլքերով, իւր երերուն լոյսով խաղում էր քաղաքի տների, պատերի, խանութների ոսկեզօծ ցուցանակների եւ կըր-

Անցան տասնեակ տարիներ:

Ն... քաղաքի առաջնակարգ «շանթան»ը վառ լուսաւորուած էր:

Ամբոխը լցըել էր գահլիճը եւ օթեակները, ու նստած սեղանների շուրջը ուտում, խմում եւ գուարճանում էր:

Կիսամերկ կանայք, կլտի ժպիտները շրթներին, լիրք, անտամօթ հայեացքներով, մաշտած, յոգնած եւ չափից գուրս ներկած երեմներով զոյդ զոյդ ման էին գալիս դաշիճում եւ կամ աղամարդկանց մօտ խմում էին:

Նրանց բարձրաձայն բացագանչութիւնները խլացնում էին խոպոտ գերասանների անհամ երգերը բեմի վրայ:

Գինու եւ օղիի գոլսը շներից ապականուած օգում սուր կերպով զգացվում էր մարդկային քրտինքի, մարմնի եւ կտնանց օձանելիքների հատը:

ԲԵՄԻ վրայ երեւաց մի գնչուհի:

Ամբողջ դաշտին մի ակնթարթում
լոեց եւ բուռն ծափահարութիւններով դի-
մաւորեց շանթանի փայլուն աստղին, դըն-
չուհի Սաթօյին:

Սաթօն սկսեց երգել:

Նրա հմայիչ ձայնի գեղեցիկ դայլայ-
լիկները ապրածուեցին մեծ, շքեղ դաշտի-
ճում:

Նա երգում էր մի փոքրիկ որբ աղջ-
կայ կրած չարչարանքների մասին:

Նա երգում էր մի անփորձ օրփորդի
ունակով արած սիրոյ մասին:

Եւ ո՛րքան մաշոցք ո՛րքան տանջանք,
ո՛րքան լուս ու մունջ տանջանքներ կային
այդ երգերում:

Ամբոխի արբածութիւնը անցաւ,

Նա ակնապիշ լսում էր Սաթօյի սրա-
մաշ երգերը:

Այդ երգերը զարթեցրին ունկնդիրների
մէջ նրանց վաղ անցեալը, նրանց առլում-
ների գեղեցիկ փշրանքները, նրանց անքիծ,
մաքուր ձգառումները, դիման նրանց սր-
տերի նուիրական խորքերին եւ գմաէ մի
լուպէ տուին նրանց մաքուր ապրումներ, մի
տեսակ մոռացութիւն կեանքի կեղտից ու
ցեխից:

Դեռ չէր լոել երգի վերջին հառաջան-
քը, երբ Սաթօն յանկարծ ցնցուեց ամբողջ
մարմառվ, շարժեց գլուխը, ուսերը, ձգեց
ամբոխին իւր կրակոտ աչքերի ըմբռաս հայ-
եացքը եւ սկսեց պարել:

Օձի նման գալարուելով, ծուելով իւր
նապսակ իրանը այս ու այն կողմը, արձա-
կելով ժամանակ առ ժամանակ սուր ճիշեր,
նա, շնչակացնելով դաշիրան, սկսեց արագ
պտուռիկ կրակոտ, վայրի թոփչքների մէջ:

Կատաղի պարը փոխուեց մեղմ, երե-
րող տատանումների, կարծես աշուելի փո-
թոփիկց յետոյ մեղմ գեփիւռը շոյում էր
անձայր դաշտում հասած ցորենի հասկե-
րը, եւ նրանք, շարժուելով դէս ու դէն,
կռանում էին միմեանց եւ պատմում իրար
գեղեցիկ հէքեաթներ:

Կարծես քամին, անցնելով խաղաղ ծո-

վի մակերեւոյթով, հաղիւ հաղ դիպջում
էր անշարժ ջրերին, եւ նրանք, յուղուելով
քամու համբոյրներից, սկսում էին շփուիլ
միմեանց սիրային գդուանքների մէջ:

Տխուր մեղեդիի վերջին հառաջը լոեց
օրկեսորում եւ Սաթօն մնաց արձանացած,
քարայրած:

Վարագոյը իջաւ, շանթանի պատերը
դպրուացին ամբոխի աղմկալից բացագ ան-
ցութիւններից եւ ծաղիկների մի հեղեղ
թափուեց ըեմ:

Ժամանակի անխւը անընդհատ կլորւում
էր յառաջ եւ յասաջ:

Յայսնի երգչուհի Սաթօյի տատղը ար-
դէն խսւարել էր:

Անցել էին նրա երիտասարդութեան
գեղեցիկ, լոյս օրերը եւ անքուն գիշեր-
ները, շամպայնը եւ սիրային արկածները
օր առաջ ծերացըրել էին նրան:

Երբեմն լայն, էպուրս ցցուած, կլորակ
նրա ճակատը ծածկուել էր խորշամներով,
երեսի գոյնը թռել էր եւ գեղնագոյն, մա-
գաղաթեայ կաշին կարծես աեղ տեղ պոկ-
ուել էր մսից եւ լաթի նման կախուել:

Նախկին կրակը այլ եւս չէր փայլում
նրա մարած, կողերի մէջ խորը ներս ըն-
կած աջերում:

Ամբոխը վաղուց մոռացել էր իւր
պաշտած Սաթօյին, որի մի սիրալիր ժակի-
տի համար նա պատրաստ էր երբեմն տալ
ամէն ինչ:

Երազի, տենդային երազի նման անցաւ
Սաթօյի կեանքը իւր անվերջ ինչոյքնե-
րով, զսարձութիւններով, իւր սուր, արո-
փոտ ապրումներով:

Ընկնելով գրկից գիրկ, Սաթօն ըմպեց
հեշտասիրութեան եւ երջանկութեան բա-
ժակը մինչեւ տակունցըրը:

Նրան մոռացան:

Իսպառ:

Շանթանների հորիզոնում արդէն փայ-
լում էին նոր աստղեր:

Եւ Սաթօն կամայ ակամայ քաշուեց
մի կողմ:

Նա ճարում էր իւր ապրուստը՝ ծախե-
լսվ եւ գրաւ գնելով այն թամնկադին իրե-
րը, որ ժամանակով նուիրել էին նրան նրա
երկրազարդուները:

Անցան շաբաթներ, ամիսներ, տարի-
ներ եւ Սաթօյի վերջին մատանին գտաւ
իւր հանդիսալ հրէայ վաշխառուի մօտ:

Զաղիր կարօտը իւր ոսկրուտ ձեռքով
դարկեց Սաթօյի բնակարանի դուռը:

Հարկաւոր էր ապրուստի հաց ճարել:

Մութ գիշերներին նա գուրս էր գալիս
փողոց՝ քսուած, ներկած երեսով, եւ առա-
ջարկում էր անցորդներին իւր մարմինը:

Պատահում էր, որ անցորդները փողոցի
լավաերների լոյսի տակ նայում էին Սա-
թօյի երեսին, տեսնում էին այս խորշու-
ների ալօնները եւ ծիծաղելով չեսանում
էին:

Մի օր՝ տանտէրը, չատանալով Սաթօյից
երկար ժամանակ բնակարանի վարձքը,
գոհուեց նրան սմից:

Եւ փողոցը կրկն բնդունեց իւր գիրկը
վաղեմի ծանօթին:

Կրկն փողոցի անկիւնում կեղասաք ցըն-
ցառիները հազին կանգնած էր Սաթօն: Նրա
մայած, կարմրած, միշտ արտասուող աչ-
քերի հայեցքը անզգաստ անցնում էր
կրկն պարզած էր ողորմութեան համար:

Եւ ոչ ոք այդ ողորմելի մուշացիկի
մէջ չճանաչեց երբեմն աշխարհ շւացնող
գեղեցկուհի Սաթօյին:

Անձրեւի անվերջ, ոգաւոր կաթիւները
միակերպ եւ որասմաշ ընկնում էին ամ-
պամած երկնքից փողոցի սալայատակի,
մայթերի վրայ, թրջելով շքեղ կրպակների
մեծ, քառանկիւնի աղակիւները, ոսկետառ
ցուցանակները եւ սակաւաթիւ անցորդ-
ներին:

Գլխաւոր փողոցի անկիւնում, յենուած
թաց պատին, կանգնած էր պառաւ մու-
րացիկը:

Այդ օրը նա հազիւ կարողացաւ գալ
իւր սովորական աեղը:

Մի ինչ որ սուր բան ծակում էր նրա
ներսը եւ նրա չնշառութիւնը սոէպ սոէպ
կարւում էր:

Նա գողում էր ամբողջ մարմնով. սար-
սուռ մտել էր նրա սակարների, նրա կա-
շու մէջ:

Անցաւ մի քանի ժամանակ:

Սաթօն լայն բացեց իւր աչքերի ու-
ստած կոպերը, պարզեց գողացող ձեռքը, ե-
րերաց, թեքեց ալեզարդ գլուխը իւր ներս
ընկած կրծքին եւ յանկարծ ընկաւ, կար-
ծես նստաւ թաց, ցեխոտ մայթի վրայ:

Եւ փողոցը, այդ Via Dolorosaն, Սա-
թօյի այդ խորթ մայրը, բնդունեց իւր
ցուրտ, անհամըոյը գիրկը իւր գոհին: